Հավելված

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի

«24» հունվար 2011 թ.

N 03-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-20

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «29» հունվարի, 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ը*, ի դեմս տնօրեն *Աշոտ Մելքոնյանի* (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), *««Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»»* ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև *149018,2 հազ. դրամ* գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հ< ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝

տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է *149.018.200 (մեկ հարյուր քառասունինը միլիոն տասնութ հազար երկու հարյուր)* ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև *137.096.744 /Հարյուր երեսունյոթ միլիոն իննսունվեց հազար յոթ հարյուր քառասունչորս/* ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ 163008100733
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 00008037
Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան	Տնօրեն՝ Աշոտ Մելքոնյան
Կ.Տ.	Կ.Տ.

ՌՈՒԲԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 1
«29» 01 20.15թ.
N 2-20 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

««Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015թվականի պետական բյուջե

2.Աշխատանքի նպատակը---- Հայ ժողովուրդն իր հարուստ պատմությունն ու մշակույթը կերտել է շնորհիվ բազմաթիվ գործոնների: Պատահական չէ, որ առնվազն մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներից Հայկական լեռնաշխարհում հանդես եկած առաջին պետական կազմավորումների վերնաշենքային համակարգը ստեղծվեց հայ էթնոսի ձևավորման ընդհանուր հենքի վրա: Ուստի միանգամայն հասկանալի է, որ պատմական Հայաստանի տարածքի վրա ստեղծված պետական կազմավորումներն՝ Արմանում- Արմինա-Արմե-Շուբրիա, Արատտա, Հայասա, Իսուվա, Էթիունի, Դիաուխի, Վանի կամ Արարատյան թագավորություն-Բիայինիլի-Ուրարտու և այլն, էլ իրենց հերթին դարձան հայ ժողովրդի կազմավորման գործընթացի անբաժան մասը և վերածվեցին հուսալի կռվանի հայ էթնոսի գոյատևման ու զարգացման համար:

Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած վերոհիշյալ կազմավորումների մասին շարունակվում են պահպանվել ոչ միայն առանձին իրարամերժ մոտեցումներ, այլև ամբողջ հայեցակարգեր, ընդ որում, դրանց մի մասը հենվում է շինծու տեսությունների վրա և քաղաքականապես խիստ վտանգավոր է: Այդ իմաստով զարմանալի չէ, որ հայոց պետականության պատմությունը օտար պատմաբանների կողմից առավել չափերով է ենթարկվում նենգափոխման:

Այսպես 1920-30-ական թվականներից Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալի անմիջական ջանքերով գործող «Թուրքական պատմական ընկերության» առջև դրված բազմաթիվ պետական պատվեր-խնդիրների մեջ առանձնացվեց «Արևելյան Անատոլիայում», այն է Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած պետությունների էթնիկ պատմության հիմնահարցը: Շուտով «գիտական պրպտումների» արդյունքում թուրք «մասնագետները» կարողացան բացահայտել այդ կազմավորումների տարածքում ապրած ժողովուրդների էթնիկ պատկանելությունը, այսինքն թյուրքական տարրի ոչ միայն առկայությունը, այլև գերակշիռ ազդեցությունը:

Իրենց թուրք գործընկերներից հետ չմնացին նաև ադրբեջանցիները, որոնք մի կողմից իրենց հռչակեցին տարածաշրջանի հնագույն ժողովուրդներից մեկի աղվանների պատմության ու մշակույթի ժառանգորդներ, մյուս կողմից Արցախում, Ուտիքում, Սյունիքում և այլուր «հայտնաբերեցին» թյուրքական ներկայության «անհերքելի» կռվաններ: Բանն հասավ այնտեղ, որ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի մակարդակով ադրբեջանական կողմը ոչ միայն իրեն ազդարարեց Անդրկովկասի հնագույն ժողովուրդներից մեկը, այլև կասկածի տակ առավ առհասարակ այս տարածաշրջանում հայկական որևէ պետականության գոյությունը զուգահեռաբար չմոռանալով հայերին անվանել թյուրքական էթնոսի դեմ ցեղասպանություն իրականացրած ժողովուրդ:

Վերոհիշյալ նենգափոխումները մեզանում երբեմն ոչ միայն աննկատ են մնում, այլև ենթագիտակցաբար պաշտպանություն են գտնում: Օրինակ շատ հաճախ մեր մասնագետները խուսափում են Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների բնակչության մեջ տեսնել հայ էթնիկ տարրեր ելնելով ակադեմիական գիտության շահերից, այն դեպքում, երբ մեր հարևանների կողմից ուղղակիորեն իրականացվում է պատմաշինարարություն: Անշուշտ, մենք հեռու ենք այն մտայնությունից, թե հարկավոր է իջնել պատմության կեղծարարների մակարդակին: Սակայն գիտության ներկա փուլում ունեցած ձեռքբերումները նման ընդհանրացումների համար որոշակի հնարավորություններ տալիս են:

Այսպիսով հայոց վաղ պետականությունների խորազնին ուսումնասիրությունը մեզ համար ունի ոչ միայն զուտ գիտական, այլև քաղաքական ու ճանաչողական մեծ նշանակություն: Հազարամյակների հայոց պատմության խորհուրդը նրա անընդհատականության և շարունակականության մեջ է: Հայ ժողովուրդը, հանդես գալով երկիր մոլորակի վրա մարդկային հասարակության առաջացման ընդհանուր գործընթացների շրջանակներում և անցնելով դժվարին ու տառապալից, բայց փառահեղ պատմական ուղի, այսօր իր ուրույն տեղն ունի համաշխարհային քաղաքակրթական պատմության ու մշակույթի զարգացման բնագավառում:

Պետականության պատմության հետազոտության տեսանկյունից հսկայական կարևորություն ունեն Երվանդական կամ Երվանդունյաց (մ.թ.ա. 6-3 դդ.), Արտաշեսյան (մ.թ.ա. 189 - մ.թ.1 թ.) և Արշակունյաց (66-428 թթ.) թագավորությունները: Որքան էլ շատ լինեն ուսումնասիրություններն այս թեմաներով, այդուհանդերձ բազմապիսի հարցեր մնում են չլուսաբանված: Պատահական չէ անգամ, որ առանձին ուսումնասիրողներ կասկածի տակ են դնում Երվանդական արքայատոհմի գոյությունը, ուրիշները, հետևելով պատմահայր Մովսես Խորենացուն Արտաշեսյան դինաստիան համարում են Արշակունյաց և այլն: Ընդգծենք նաև, որ այս թագավորությունների գոյության շրջանում հին աշխարհի պատմության ընդհանուր հենքի վրա վառ ձևով դրսևորվեց հայ ժողովրդի

ինքնահաստատման ողջ ուժը: Հին աշխարհի հելլենիստական պետությունների շարքում Հայաստանը դարձավ Մերձավոր Արևելքի առաջատար երկրներից մեկը:

Հատկանշական է, որ հայոց հելլենիստական պետությունների պատմության մեջ ևս պահպանվել են շատ մութ էջեր: Այսպես դեռ հստակ չեն մ.թ.ա. 3-րդ դարի վերջին հայկական մի քանի պետությունների Ծոփքի, Փոքր Հայքի և Կոմմագենեի պատմության հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր: Լիովին վերանայման կարիք ունի Տիգրան Մեծի կողմից Պարթևստանի և Մերձավոր Արևելքի այլ երկրների հետ մղած պատերազմների արդյունքում ստեղծված տերության մասին գոյություն ունեցող այն դրույթը, թե այդ ժամանակ Հայաստանը տարածաշրջանի նկատմամբ միայն իրականացնում էր ագրեսիվ քաղաքականություն: Մինչդեռ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ «նվաճումները» սպասվող հռոմեական ագրեսիայի դեմ Արևելքի երկրների կոալիցիա ստեղծելու նպատակ էին հետապնդում:

Պետականության պատմության ուսումնասիրությունը նոր մոտեցումներ է պահանջում նաև ինչպես բազիսային հարաբերությունների սոցիալ-տնտեսական կյանքի, այնպես էլ վերնաշենքային կառույցի պետական կարգի հետազոտության տեսանկյունից: Այդ իմաստով ժամանակի հրամայականն է տալ այն հարցի պատասխանը, թե տոհմատիրական հարաբերությունների քայքայումից հետո Հայաստանում ինչպիսի տնտեսական համակարգ է եղել, ի՞նչ բնույթ են ունեցել վաղ հայկական ու հելլենիստական պետությունները, ինչպե՞ս և ե՞րբ է տեղի ունեցել անցումը դեպի ավատատիրություն:

Հետազոտության շրջանակներից դուրս չեն մնա Բագրատունյաց Հայաստանի, Սյունիքի, Կարսի, Տաշիր-Զորագետի և Կիլիկիայի թագավորությունների պատմության հարցերը: Ընդ որում, վերջինիս խնդիրների արծարման ժամանակ չպետք է մոռացության տալ այն հանգամանքը, որ Կիլիկիայում որքան էլ ուրախալի էր քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային վերելքի անուրանալի իրողությունը, այդ ամենը տեղի էր ունենում մայր Հայրենիքից հայ բնակչության զանգվածային արտագաղթի հաշվին:

Հազարամյակների պատմության ընթացքում հայ ժողովուրդը բազմիցս ապրել է մղձավանջային ժամանակաշրջաններ, երբ մեծապես վտանգված է եղել նրա գոյատևման խնդիրը: Այդ մաքառման ու փորձության ճանապարհը նա անցել է անկոտրում կամքի և ապագայի նկատմամբ անսահման հավատի շնորհիվ: Պատահական չէ, որ հայոց պատմության անընդհատականության շղթայում ազատագրական պայքարի էջերը փառահեղ և ուրույն տեղ են զբաղեցնում: Հաստատապես կարելի է ասել, որ այդ պատմությունը առավելապես հայ ազատամարտի տարեգրություն է:

Ճակատագրի բերումով ազատագրական պայքարի պատմությունը հայ ժողովրդին ուղեկցել է իր անցած ողջ պատմական ուղու ընթացքում: Հայկական առաջին պետական կազմավորումներն իրենց գոյությունը պահպանել են Մերձավոր Արևելքի զանազան

աշխարհակալ տերությունների դեմ պայքարի արդյունքում: Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու այդ պայքարն իր արտացոլումն է գտել նաև հայ ժողովրդական բանահյուսության մեջ վաղնջական ժամանակներից Հայկի ու Բելի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի պայքարի տեսքով:

Հատկանշական է, որ նույնիսկ մ.թ.ա. II-I դդ., երբ Մեծ Հայքի թագավորությունը վերածվել էր տարածաշրջանի ուժեղագույն պետություններից մեկը, դարձյալ ժամանակ առ ժամանակ հարկադրված էր պայքար մղել իր պետականության ու տարածքային ամբողջականության պահպանման համար: Գրեթե համանման իրավիճակ էր նաև Արշակունիների գահակալության շրջանում, հատկապես III դ. 20-ական թվականներից հետո, երբ Պարսկաստանում պատմության թատերաբեմ իջան Սասանյանները: Վերջիններիս մշտական ոտնձգությունների դեմ անկախ պետականության համապանման համար մղվող պայքարն իր գագաթնակետին հասավ IV դարում, մանավորապես Արշակ II-ի և Պապի գահակալության շրջանում:

428 թ. պետականության անկումից հետո, երբ Սասանյաններն հանդես եկան հայ ժողովրդին կրոնափոխելու, զրադաշտականություն պարտադրելու քաղաքականությամբ, հայ ազատագրական պայքարը, V-VI դդ. արտաքինից պարուրվելով կրոնական պատերազմների շղարշով, խորքի մեջ մնաց ավելի լայն, քաղաքական, ազատագրական երևույթ:

Հայ ազատագրական պայքարը թեժ բնույթ ստացավ VIII դ. արաբների, XI դ Բյուզանդիայի ու սելջուկների, XIII դ. մոնղոլների, ավելի ուշ օսմանյան թուրքերի դեմ: Հայ ժողովուրդը պայքարի ու մաքառման էջեր գրեց նաև Բագրատունյաց Հայաստանի ու Կիլիկիայի պատմության տարեգրության մեջ:

Պետականության բացակայության առանձին փուլերում հայոց պետականության վերականգնման ձգտումը դարձավ հայ ազատամարտի գլխավոր ուղղությունը, հանգամանք, որը յուրահատուկ անթեղված ձևով ապրեցրեց անկախության գաղափարը:

XVIII դ. 20-ական թվականներին հայ ժողովուրդն ազատագրական պայքարի շնորհիվ Հայաստանի զանազան շրջաններում Սյունիքում, Արցախում և այլուր դե ֆակտո վերականգնեց իր ինքնիշխանությունը, հասարակական-քաղաքական շրջանակներն առաջադրեցին ժամանակի համար խիստ առաջադիմական ազատագրական ծրագրեր: 1720-ական թթ. Խամսայի մելիքությունների ստեղծումը Նադիր շահի կողմից վկայեց տարածաշրջանում հայկական գործոնի ազդեցության աճը:

XVIII դ. կեսերից Հայաստանի ազատագրության և ապագա բարգավաճման համար բուռն գործունեություն են ծավալում հնդկահայ նշանավոր գործիչներ Հովսեփ Էմինը: Մովսես Բաղրամյանը լույս է ընծայում «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» գիրքը: Մադրաս քաղաքում ապրող հնդկահայ հայրենասերների խումբը հրատարակում է «Որոգայթ փառաց»

աշխատությունը, որն ըստ էության ապագա Հայաստանի կառավարման համար պետք է օրենքների ժողովածու լիներ: Հնդկահայ գործիչներին հովանավորում էր մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը: Հնդկահայ գործիչները ապագա Հայաստանի համար նախատեսում էին բուրժուական, հանարապետական իրավակարգ և ըստ էության հանդիսանում էին ազգային գաղափարախոսության նախակարապետներ:

Ինչպես հայտնի է 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը ազատագրվում է պարսկական տիրապետությունից և միանում Ռուսաստանին: Սակայն Արևմտյան Հայաստանը շարունակում է մնալ թուրքական ծանր լծի տակ:

Չնայած ցարական Ռուսաստանը Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, վարում էր գաղութային քաղաքականություն, արևելահայության հոգսը գերազանցապես իր արևմտահայ եղբայրներին օգնելու խնդիրն էր: 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմում Օսմանյան Թուրքիայի պարտությունը կարծես թե արևմտահայության ազատագրման իրական հիմքեր ստեղծեց և հայ ժողովրդի երկու հատվածներում քաղաքական աշխուժություն առաջացավ: Վերջիններիս հասարակական-քաղաքական և հոգևոր առաջնորդները Մկրտիչ Խրիմյանի ղեկավարությամբ ոգևորված Սան-Ստեֆանոյում կնքված ռուս-թուրքական համաձայնության վերջանակետով խանդավառված Բեռլին մեկնեցին և եվրոպական երկրների, մասնավորապես անգլիական դիվանագիտության խարդավանքների պատճառով ձեռնունայն վերադարձան:

XIX դ. 70-ական թվականներից, երբ արևմտահայության ազատագրության խնդիրը «Հայկական հարց» անունով դարձավ միջազգային դիվանագիտության առարկա, հայ ազգային-ազատագրական պայքարն հասավ իր գագաթնակետին:

Այս խնդրի գաղափարական նախապատրաստման գործում մեծ դեր ունեցան հայ հասարակական-քաղաքական շրջանակները ժամանակի հարուստ մամուլի էջերում ներկայացնելով իրենց մոտեցումները, որոնցից շատերն արտացոլում գտան ազատագրական խմբակների, ազգային կուսակցությունների ծրագրերում և պրակտիկ գործունեության մեջ:

Հայկական հարցը կազմեց հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական բովանդակությունը: Այն առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կողմից օգտագործվեց հայերի նկատմամբ ցեղասպանության իրականցման, նրանց հայրենազրկման համար: Եղեռնից փրկված հայությունը սփռվեց աշխարհով մեկ, իսկ հայկական հարցը վերածվեց ցեղասպանության ճանաչմանը, հայկական պատմական տարածքների վերադարձմանը միտված գաղափարի հայ դատի:

Բեռլինի վեհաժողովում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը դարձավ միջազգային շահարկումների առարկա, ձևափոխվեց 61-րդ հոդվածի և տասնամյակներ շարունակ հայ ժողովրդին պահեց գերլարված վիճակում: Մեր ժողովրդի նկատմամբ Թուրքիայում սաստկացող հալածանքներին ի պատասխան ծայր էր առնում

դիմադրական շարժում: Հայ առաջադեմ մտավորականությունն ի դեմս մեծ գրողներ Ռաֆֆու և Պատկանյանի և նշանավոր հոգևոր-հասարակական գործիչ Մկրտիչ Խրիմյանի հնչեցվում էին մարտական կոչեր՝ դառնալով ազգային-ազտագրական գաղափարախոսության յուրատեսակ ռահվիրաներ:

1870-1880-ական թվականներին մեր ժողովրդի երկու հատվածներում գործող գլխավոր հասարակական հոսանքներն էին՝ ազգային-պահպանողական, ազատական և ժողովրդավարական, և այդ երեք հոսանքների ներկայացուցիչներն իրենց տարբեր մերձեցումներով հանդերձ ընդհանրապես Հայաստանի ճակատագրով շահագրգռված անկեղծ անձնավորություններ էին:

Սակայն 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում սաստկացող հալածանքների և ծայր առած կոտորածների հետևանքով աստիճանաբար թուլանում են հասարակական հոսանքները և ծնունդ են առնում հայկական ազգային-հեղափոխական մարտական կուսակցությունները: 1885 թվականին Վանում հիմնադրվում է արմենականների կուսակցությունը: 1887 թվականին Ժնևում ստեղծվում է Հնչակյան կուսակցությունը: 1890թ. Թիֆլիսում հիմնադրվում է Դաշնակցություն կուսակցությունը:

Հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները հայդուկային կռիվներից, Օսմանյան կայսրություն անցնող առաջին ջոկատների կողմից ձեռնարկված հարձակումներից անցնում են կազմակերպված դիմադրության. 1894 թվականի Սասունի ինքնապաշտպանությունը հայ կուսակցությունների նոր ռազմավարության ապացույցներ էին:

Վերոհիշյալ հիմնահարցերի ուսումնասիրությունը խորհրդային պատմագրության կողմից հաճախ ներկայացվել է մարքս-լենինյան գաղափարախոսության, դասակարգային պայքարի դիրքերից: Դրանց մի զգալի մասը վերջին տարիներին մշակվել է, բայց շատ հարցեր դեռ կարոտ են նորովի հետազման:

Հայ պատմագրության մեջ ուրույն տեղ ունի 20-րդ դարի հայկական պետականությունների պատմության գիտական ուսումնասիրությունը: Միմյանց հաջորդեցին երեք պետականություններ Հայաստանի Հանրապետություն (1918 -1920 թթ.), ՀԽՍՀ (1920-1991 թթ.) և դարձյալ Հայաստանի Հանրապետություն պաշտոնական անուններով: Նրանցից յուրաքանչյուրը ստեղծվել է աշխարհաքաղաքական առանձնահատուկ պայմաններում: Նրանց պատմության ուսումնասիրությունն ունի ինչպես ընդհանրություններ, այդպես էլ տարբերիչ կողմեր:

Առաջին հանրապետությունը գոյատևել է ընդամենը երկու և կես տարի: Գիտաճանաչողական հետաքրքրություն են ներկայացնում նրա պատմության բազմաթիվ հարցեր, որոնց մեջ առանձնանում են պետականության հռչակման և նրա կործանման խնդիրները: Հետազոտության կարոտ է այն հարցը, թե ինչպիսի իրադրության

պայմաններում ծնվեց Հայաստանի Հանրապետությունը: Պետք է հաշվի առնել Հոկտեմբերյան հեղաշրջման հանգամանքը և դրան հաջորդող գործընթացները, Անդրկովկասյան պետության ստեղծումը, ներքին, ազգամիջյան հակասությունները երկրամասում, ազգային զարթոնքի վերածնունդը Անդրկովկասի ժողովուրդների մոտ, թուրքական պետության (երիտթուրքերի կառավարության) վերաբերմունքը մասնավորապես հայերի ու Հայկական հարցի նկատմամբ և այլն:

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում, ինչպես նշվեց Հայաստանի Հանրապետության անկման պատճառների հարցը: Կան քաղաքական (կուսակցական) բնույթի մեղադրանքներ, երբ փորձ է արվում հանրապետության անկումը բացատրել նույն հանրապետության սխալներով ու մեղքերով: Իսկ շատ պատմական վավերագրեր, որ ավելի են համապատասխանում իրականությանը, ժխտելով առաջին տեսակետը, վկայում են այն արտաքին ուժերի ճնշման իրողության մասին, որոնք ուղղակի հասցրեցին իշխանության ինքնահրաժարականին, երբ խաղաղ անցում կատարվեց մի նոր պետականության:

Որոշ պատմաբաններ անհիմն կերպով փորձում էին Խորհրդային Հայաստանը պետականություն չհամարել: Սա պարզամիտ մուտեցում է. անկախությունը և պետականությունը համարժեքներ չպետք է դիտել: Խորհրդային Հայաստանի նկատմամբ գոյություն է ունեցել և թերևս, շարունակում է գոյություն ունենալ նիհիլիստական վերաբերմունք, որը ժխտում է դրական արժեքների ձեռքբերումը պատմական տվյալ ժամանակաշրջանում: Անկախ նրանից, թե վարչակարգը ինչ չարիքներ է գործել խորհրդային ժողովուրդների նկատմամբ, խորհրդային 70 տարիները հայ ժողովրդին տվել են նաև շատ դրական արժեքներ: Ստեղծվել են վիթխարի արտադրողական ուժեր, որոնց հետագա պահպանումը, որ դժբախտաբար տեղի չունեցավ, բանավոր հիմք կարող էր ծառայել տնտեսական վերելքի համար ներկա պատմական ժամանակաշրջանում: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա տվյալ տասնամյակները անհամեմատելի են ամբողջ դարերի հետ:

ԽՍՀՄ կազմում հայ ժողովուրդը ունեցավ խաղաղ ապրելու և ստեղծագործելու ապահով պայմաններ: Խորհրդային Հայաստանն անկախ չէր, բայց օժտված էր պետականության բոլոր ատրիբուտներով և սահմանափակ իրավունքներով պետություն էր ընդհանուր պետության մեջ:

Հայ ազատագրական պայքարն իր ուրույն դրսևորումն ունեցավ XX դ. 80-ական թվականների վերջին, երբ համայն հայությունը ոտքի կանգնեց հանուն Արցախը մայր հայրենիքին միացնելու գաղափարի, որին զուգընթաց 1991 թ. վերագտավ նաև իր պետական անկախությունը:

Այլ է Երրրոդ հանրապետության ճակատագիրը: Այն հռչակվել է որպես անկախ պետություն, կրում է առաջին հանրապետության անունը հաստատելու և հիշեցնելու համար այն իրողությունը, որ ինքը ասես նույն առաջին հանրապետությունն է, շարունակում է նրա

սկսած գործը նոր իրադրության պայմաններում, երբ նրա (ներկայի) իշխանությունների ճիշտ
ու հեռատես, հավասարակշռված քաղաքականության հետ է կապված պետության ու հայ
ժողովրդի ապագան: Երրորդ հանրապետության գործընթացները, պատմական ճակատագրի
բերումով, զուգադիպել են հայ ժողովրդի ազգային խնդիրներից մեկի լուծման հետ, որպիսին
է Լեռնային Ղարաբաղի ազատագրումը: Այստեղից այսօրվա հայոց պետության
պատմության հետազոտության անհրաժեշտությունը:

Մեր ժողովրդի անցյալի պատմության հարցերի քննությունը մշտապես գտնվել է
պատմաբանների ուշադրության կենտրոնում, այն առավել թափ ստացավ խորհրդային
ժամանակաշրջանում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում
ավանդաբար գերակայել է հայոց աղբյուրագիտությունը: Գիտական հիշյալ բնագավառը
նշանավորվել է տարբեր դարաշրջաններին ու թեմաներին վերաբերող սկզբնաղբյուրների
հրատարակումով: Հայկական սկզբնաղբյուրները բացառիկ նշանակություն ունեն ինչպես
հայրենի, այնպես էլ օտար երկրների ու ժողովուրդների անցյալն ուսումնասիրելու գործում:

Խորհրդային տարիներին ընդլայնվեցին հետազոտությունների շրջանակները,
անհամեմատ հարստացավ նրանց աղբյուրագիտական հենքը, պատմագիտությանը մեծ
նպաստ բերեցին հարակից գիտությունների նվաճումները:

Ձեռագրերի հիշատակարանների ժողովածուների հրատարակությունը մնում է
պատմության ինստիտուտի առջև ծառացած խնդիրներից մեկը:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո հայ պատմագիտությունն
ազատվեց գաղափարական կապանքներից և բռնեց զարգացման ազատ ու անկաշկանդ ուղի:

ԳԱԱ պատմության ինստիտուտում մեծ ու ծանրակշիռ աշխատանքներ են տարվել
հայ-ռուսական պատմական կապերին նվիրված փաստաթղթերի ու արխիվային նյութերի
բազմահատոր ժողովածուների հրատարակման գործում: Հոկտեմբերյան հեղափոխությանը,
Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը և Հայրենական մեծ պատերազմին
նվիրված ժողովածուներ նույնպես հրատարկվել են: Սակայն հիշյալ վավերագրական
նյութերի ժողովածուներն անհրաժեշտ է նորովի կազմել, որովհետև նրանցում չեն
պահպանվել անհրաժեշտ գիտական պահանջները: Դրանցում նյութերն ընտրվել են
միակողմանի, վավերագրերը հրատարակվել են կրճատումներով:

Վերջին տարիներին հայոց պատմության աղբյուրագիտական բազան հարստացավ
նոր նյութերով ու ժողովածուներով, որոնք հիմնականում նվիրված են նոր ու նորագույն
ժամանակաշրջանների պատմությանը:

Պատմության ինստիտուտը հայոց պատմության տարբեր հարցերի ու
ժամանակաշրջանների վերաբերյալ իրականացրել է սկզբնաղբյուրների հրատարակության
մեծ ծավալի աշխատանք: Այդ գործում, սակայն առկա են բացթողումներ ու թերություններ,

որոնք հիմնականում արդյունք են խորհրդային տարիներին պատմագիտության կողմից սկզբնաղբյուրները հրատարակելու որդեգրած սկզբունքների ու մոտեցումների: Ինչպես երևում է, վերջին տարիներին այդ ուղղությամբ կատարված աշխատանքներն որքան էլ շոշափելի են, այնուամենայնիվ բավարար չեն և նորովի ուսումնասիրման կարիք ունեն: Թեմայի շրջանակներում առաջիկա տարիներին կհրատարկվեն նոր սկզբնաղբյուրներ և ժողովածուներ:

1940-ական թվականների կեսերից պատմության ինստիտուտում արդյունավետ աշխատանքներ կատարվեցին հին և միջնադարյան Հայաստանի պատմության բարդ ու կնճռոտ, միաժամանակ առանցքային մի շարք հիմնախնդիրների լուսաբանության ուղղությամբ:

Պատմության ինստիտուտում գիտական արտադրանքի ծավալի տեսակետից զգալի տեղ են գրավում Խորհրդային Հայաստանի պատմությանը նվիրված աշխատությունները, որոնք վերաբերում են ամենաբազմազան հարցերի: Վերջին տասնամյակներում շեշտակիորեն աճեց Հայրենական մեծ պատերազմի պատմությանը նվիրված աշխատությունների քանակը:

ՀՀ անկախության հռչակումից և ինստիտուտում կատարված վերափոխություններից հետո կատարվում է նախկինում անուշադրության մատնված մի շարք թեմաների պատմագրության ուսումնասիրությունը, ուշադրություն է դարձվում աչառու ներկայացված հիմնախնդիրներին:

Այսպիսով ստեղծվել է հայոց պատմության զանազան հարցերին նվիրված պատկառելի ժառանգություն, որն անհրաժեշտ է ներկայումս ի մի բերել և գիտական հանրությանը ներկայացնել քաղաքական կապանքներից ազատված ու անաչառ գիտության դիրքերից: Այդ մոտեցումներն իրենց ամփոփումը կգտնեն հայ պատմագրությանը նվիրված երկհատոր աշխատությունում:

Ծրագրի կատարումը իրականացվելու է ինստիտուտի գիտաշխատողների կողմից:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)

Խիստ անհրաժեշտ է ծրագրի կատարմանը մասնակից դարձնել երիտասարդ կադրերի, գիտական սերնդափոխությունը ճիշտ իրականացնելու համար: Ուստի նպատակահարմար է գտնվում ծրագրի շրջանակներում հատկացնել ասպիրանտուրայի առնվազն երկու տեղ:

Աշխատանքն ավելի արդյունավետ իրականացնելու հիմնական դժվարությունն արտերկրի արխիվներից և գրադարաններից օգտվելն է: Անհրաժեշտ է նաև ինստիտուտի աշխատակիցներին հնարավորություն տալ ՀՀ արխիվներից փաստաթղթերի պատճենահանումը կատարել անվճար հիմունքներով, ինչպես նաև տրամադրել թվային տարբերակները:

4.Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

Մեծ կարևորություն ունեցող այս ծրագրի կատարումը կիրականացվի հետևյալ թեմաներով՝

I. «Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)»:

Ներկայացված ծրագիրը կհետազոտվի հետևյալ թեմաների շրջանակներում.

ա)Հայոց հին պետականության պատմություն

բ)Հայոց պետականությունը միջնադարում

գ)Հայ ազատագրական պայքարը հին և միջնադարյան Հայաստանում

դ)Ազատագրական պայքարը 17-18-րդ դդ.

ե)Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները XIX դ. և XX դ. սկզբին

զ)Հայ ազգային և սոցիալիստական կուսակցությունների պատմություն

է)Հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմություն

ը) Ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն

II. «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց:»

Ներկայացված ծրագիրը կհետազոտվի հետևյալ թեմաների շրջանակներում.

ա)Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (1918-1920)

բ)Խորհրդային Հայաստանի պատմություն (1920-1991)

գ)Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն (1991-2004)

դ)Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն

ե) Հայկական հարցի, հայոց ցեղասպանության և սփյուռքի հիմնախնդիրներ

III. «Աղբյուրագիտություն և պատմագրություն»

Ներկայացված ծրագիրը բաղկացած է երկու թեմաներից

ա) աղբյուրագիտություն

բ) պատմության պատմագրություն:

Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը *թեզիս, հոդված, ժողովածու, մենագրություն*

Տնօրեն Աշոտ Մելքոնյան

Հավելված 2
«29» 01 2015
N 2-20 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

««Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

N N ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)»,	ա)Հայոց հին պետականության պատմություն բ)Հայոց պետականությունը միջնադարում գ)Հայ ազատագրական պայքարը հին և միջնա դարյան Հայաստանում դ)Ազատագրական պայքարը 17-18-րդ դդ. ե)Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները XIX դ. և XX դ. սկզբին զ)Հայ ազգային և սոցիալիստական կուսակցությունների պատմություն է)Հայ հասարակական մտքի և		թեզիս, հոդված, ժողովածու, մենագրություն: Կարևոր և արժեքավոր:		42.172.200

		պարբերական մամուլի պատմությունը)Ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն				
2.	«Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց»,	Ներկայացված ծրագիրը կհետազոտվի հետևյալ թեմաների շրջանակներում. ա)Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (1918-1920) բ)Խորհրդային Հայաստանի պատ մություն (1920-1991) գ)Հայաստանի երրորդ Հանրապետության պատ մություն (1991-2004) դ)Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն ե)Հայկական հարցի, հայոց ցեղասպանության և սփյուռքի հիմնախնդիրներ		թեզիս, հոդված, ժողովածու, մենագրություն: Կարևոր և արժեքավոր:		58.415.100
3.	«Աղբյուրագիտություն և պատմագրություն»	Ներկայացված ծրագիրը բաղկացած է երկու թեմաներից՝ ա)աղբյուրագիտություն բ)պատմության		թեզիս, հոդված, ժողովածու, մենագրությու		48.430.900

		պատմագրություն:		ն: Կարևոր և արժեքավոր:		
Ընդամենը						149.018.200

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ

Տնօրեն՝ Աշոտ Մելքոնյան

Ռ.Մարտիրոսյան

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 3
«29» 01 2015թ.
N 6-20 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

««Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանի և ի դեմս *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Մելքոնյանի*, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «29» 01 2015թ. N 6-20 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ *149018200 (մեկ հարյուր քառասունինը միլիոն տասնութ հազար երկու հարյուր)* ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ 163008100733
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 00008037
Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան	Տնօրեն՝ Աշոտ Մելքոնյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 4
«29» 01 2015թ.
N 2-20 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	124448,2	24889,6	56001,7	87113,7	124448,2
2	տնտեսական և այլ ծախսեր	24570,0	4914,0	11056,5	17199,0	24570,0
3	ընդամենը	149018,2	29803,6	67058,2	104312,7	149018,2

Տնօրեն՝ Աշոտ Մելքոնյան

Գլխավոր հաշվապահ՝ Կարինե Ստեփանյան

Կ.Տ.